38. ԴՈԼՄԱ ԻՓԻԼԸ

Մեհեթ մին կնեգյ, քյնամ ա հրբվանեն կոշտը, վեր խորադյ իփիլը սրվրրցնե։

Տա հրցնում ա.— Դոլման հո՞ւնց կիփին։

Հրեվանը տրան ասում ա. — Քյնա մեսը թակե։

Ասում ա.— Գյուդում ըմ։

— Քյնա պրինձը մաչը ածե։

Ասում ա.— Գյուդում ըմ։

— Ալյերը խառնե, աղը, տախտեղը ածե, սողանը, կյինձը, նանան քրցե, խառնե։

Ասում ա. — Գյուդում ըմ։

— Տիրևըմը փրթաթե, տիր ղզղանումը։

Ասում ա. — Գյուդում ըմ։

— Դե վեր գյուդում ես, իտի էլ ըրա իլի՞, խե՞կալ ես զահլաս տանում։

— Պա է՛լ պեն ըեդմա ինի՞, խե՞ ասում չը՞ս։

Հրրեվանը տեսնում ա, վեր երե ատաժը տերտակ ա, ասում ա. — Քյնա՞ մին պատառ քաքուռ էլ տիր յրան, թող իփի։

Տա ասում ա.— Ըտել ըմ գյուդում։

Վերչը քյնամ ա մին մեծ քաքուռ տնում դուլմեն կլխեն, իփում։ Շատ վեր իփում ա, վրեսը ընգնում ա ընդեղեքյ։ Մարթը հանդան կյամ ա, պիրում ա, թա՞ դոլման տինի ըռաշկեն, վրեսը ընդեղեքյ յոր ա օնըմ։ Մարթը մին լավ ուշունց ա տամ, փռնում մին լավ տըմ-

բըզում։ Մարթը թակում ա, ինքյը տակեն օզում ա, վեր մարթին քշտեն արթար ինի, ասում ա.—Ա՛ մարթ, հրեվանըս ա սրվըրցըրալ, ես հո՞ւնց անիմ։

Էս մարթը տուն ա կյամ հրվանեն ուշունց տամ։ Հրեվանը տուն ա կյամ, տրան նաղլ անըմ, ասում.— Կնեդյըտ հիմմար ա, պահում ըս հի՞նչ անիս, դոլմա իփիլը ինքյը գյիդալիս, եկալ ա մեր զահլան տանում։

— Հա՛յ գյուդում ըմ, հա՛յ գյուդում ըմ. էտ ա՞ դյիդալը։